



0.50

Ոճերու ընդհանուր եւ հիմնական գիծերը կը գծուին գործածուած շինուածանիւթերու տեսակէտով: Փայտաշէն, աղիւսաշէն եւ կամ քարաշէն ճարտարապետութիւններու բուն հիմնական գիծերը կը տարբերին իրարմէ: Որովհետեւ, զանազան շինուածքներու լուծումը միեւնոյնը չի կրնար ըլլալ տարբեր շինուածանիւթերու համար:

Բայց Լը-Տիւք-Շուազիի տեսութիւնները ա՛յնքան ալ անիրաւ չեն եւ լիովին կը յարմարին «իսկական» քարի ճարտարապետութեան մը հիմնական տուեայներուն, որոնք կը ձեւաւորուին կազմական նկատումներէ :

Եթէ խնդրին մօտենանք շինութեան օրէնքներու տեսակէտէն, պիտի տեսնենք, որ միատարր (homogène) շինուածքի մը մէկ հատուածին (section) մէջ, հատուած մը որ պարփակէ թէ՛ ջիւլը եւ թէ կամարը, ծանրութիւններու եւ ուժերու բաշխումը կ'ըլլայ միօրինակ (uniforme) կերպով: Այնպէս որ թէ՛ ջիւլը եւ թէ կամարը կ'ենթարկուին միեւնոյն կարգի մեծութեամբ ուժերու ներդործումին: Այսպէսով՝ կարելի չէ որ ջիւլը իր վրայ վերցնէ այդ ուժերու մէկ մասը, կամարին ստացած ճնշումները թեթեւցնելու համար: Մանաւանդ, երբ կամարին ստացած ճնշումները միեւնոյն նիւթերէն, քար ու շաղախ. եւ իրենց դիմարը եւ ջիւլը շինուած են միեւնոյն նիւթերէն, քար ու շաղախ. եւ իրենց դիմադրականութեան (résistance) ընդունելի սահմանը, թէ՛ մէկին եւ թէ միւսին համար կը մնայ նոյնը: Այս սահմանը (limite admissible de résistance) կու տայ շաղախին՝ ճգմուելու հանդէպ ներկայացուցած դիմադրականութիւնը (résistance à l'écrasement): Միջնադարեան շաղախին համար՝ սահմանը չի կրնար անցնիլ, լաւագոյն պարագային եւ ամէնէն լայն թոյլտուութեամբ մը՝ 4-5 անգամ միայն շաղախուսի հարիւրորդամեզրին վրայ:

Այս բանը այնքան ճիշտ է, որ Թոստիեօն⁽¹⁾ կը հարցնէ իր կողմէ, թէ ի՞նչ է իրական դերը աղեղախուրձին, Գոթական շինութիւններու մէջ: «Արդեօք, իրական դերը աղեղախուրձն է՞, գրուած՝ խաչաձև կամարին անկիւնները կ'ըսէ ան, պարզ գարգարանք մը չէ՞, գրուած՝ խաչաձև կամարին անկիւնները ծածկելու նպատակով եւ կամ սիւնախուրձերու դժագրութիւնը շարունակելու մտադրութեամբ»:

(1) Henri Focillon: Art d'Occident, 4^{ème} éd. Armand Colin.

ուածքներ եղած են մերձաւոր Արեւելքի եւ Հայաստանի մէջ Թ-ԺԱ. դար, եւ նոյն իսկ հարաւային Եւրոպայի, Լոմպարտիոյ մէջ ԺԱ-ԺԲ դար:

Այս պարագան, աննկատ չ'անցնիր Օկլիսթ Շուաղիէն, որ թէեւ կը յիշէ զարմանքով Հաղարտի ջիւերը, սակայն չի խորացնէր իր քննութիւնը: Ստեր-չիկովսկի ալ, պահ մը հայկական աղեղախուրձերուն վրայ կենայէ եւ զանոնք նոյն իսկ Գոթականներու նախատիպը նկատելու իմաստուն եւ լուսաւոր մտածումը ունենալէն վերջ, կը շեղի իր պրպտումներու ճամբէն, որովհետեւ Թորամանեանէ եկած ներշնչումէն զուրկ է: Ան այժմ հիւսիս կ'երթայ, փայտաշէն ոճերու մէջ փնտռելու Գոթական ջիւին նախատիպը. առանց նկատելու, թէ աղեղախուրձերու յղացումը միայն ու միայն կրնար տալ, քարի քարտաքայտութիւնը: Ինչո՞ւ. որովհետեւ քարով տրուած ճարտարապետական խնդրի մը լուծումը միայն կրնար նման շինուածաձեւի մը յանդիլ:

Պալլորուչայթիս, որուն կատարած պրպտումները Հայաստանի մէջ, թանկագին աշխատութիւն մը կը կազմեն, վստահաբար կը տեսնէ Գոթական աղեղախուրձին նախատիպը՝ հայկական շինուածաձեւին մէջ. սակայն, կարծէք իրեն կը պակսի բան մը, վճռական ըլլալու համար իր տեսակէտին մէջ, այդ բանը ինքը կը կոչէ վաւերաթուղթեր (document):

Յոսիյեօն՝ որ յայտնապէս աղեղուած է Պալլորուչայթիսի աշխատութիւններէն եւ զարմանալի բաղդատութիւններէն, կը գրէ իր «Արեւմտեան Արուեստ» գրքին մէջ. «Թերեւս պէտք է աւելի ուշադիր ըլլալ արեւելեան քրիստոնէութեան շինարուեստին, Հայաստանի եւ Վրաստանի շինութիւններուն.....: Աղեղախուրձը որմնադիրի հնարք մըն է, եւ անիկա որպէս կաղմական մաս յղացուեցաւ: Եւ անոր գեղեցկադիտական կարելիութիւններէն Հայաստան հանեց նշանաւոր բաժին մը»:

Միւս կողմէ՝ է. Լամպէր⁽²⁾ ալ կ'ընդունի, թէ խաչաձեւուած աղեղներու դրութիւնը հայկական ինքնայատուկ շինութիւն մըն է:

Նոյն իսկ Պօտ-Պօլի, Ժընէվի Գեղարուեստից Վարժարանի քաջածանօթ տնօրէնը, կը զգայ թէ Գոթական ջիւը հայկականէն կը սերի:

Բոլոր այս հեղինակները թէեւ բնազդաբար կը զգան այն կապերը, որոնք կան Գոթական եւ Հայկական աղեղախուրձերու միջեւ, սակայն չեն գտներ ճշգրիտ բացատրութիւնը այս շինուածաձեւին ծնունդին. կամ աւելի ճիշտ, չեն ուզեր զայն բանաձեւել ազատ ու համարձակ կերպով: Ի՞նչ է որ զիրենք կ'արդիւնէ: Թերեւս մեր ժողովուրդին շատ փոքրաթիւ ըլլալը, արհամարհելի քանակութիւն մը, ազգայնական թթու այս շրջանին համար:

Չեմ կարծեր թէ վերը յիշած յարգելի հեղինակութիւնները տարուին նման փոքրիկ հաշիւներէ: Եւ վստահ եմ, որ ուշ կամ կանուխ, վերջնականապէս պիտի հաստատուի Հայկական կառարին իրական դերը որպէս նախատիպ:

Բայց մինչ այդ շարունակենք մեր պրպտումները:

(շարունակելի)

Ս. ձեզԱՀԻՐՁԵԱՆ
Ճարտարագէտ

(2) E. Lambert: Les premières voûtes nervées françaises et les origines de la croisée d'ogives.

ՆՈՒԱԳՈՂ ՀՐԵՇՏԱԿՆԵՐ

ՆԿԱՐԶՈՒԹԵԱՆ ՍԷՋ

○

Ճիւթ եւ ձմ Սաղմոսներուն մէջ զԱստուած օրհնաբանելու կը հրաւիրուին երգերով, նուագարաններով ու պարերով՝ բոլոր արարածները, ուստի նաեւ Հրեշտակները:

Ասոնք, սակայն, քրիստոնէական գեղարուեստին մէջ կը ստանձնեն այդպիսի ծառայութիւն մը՝ ԺԳ. դարու մօտերը: Առաջ, վերջին դատաստանը ներկայացնող նկարներուն մէջ՝ փողեր հնչեցնելու պաշտօնը միայն ունէին:

Իրենց առաջին երգը կը նշմարուի Քրիստոսի Ծննդեան տեսլարաններուն մէջ: Լուինի⁽¹⁾ խրճիթի ծածքին տակ հինգ Հրեշտակներու խումբ մը գետեղած է անոնցմէ, ոմանք՝ ծնրադիր, ուրիշներ ամպերու վրայ՝ կանգուն՝ ձեռքերին ժապերու վրայ՝ կանգուն, որուն վրայ գրուած է պաւլէն մ'ունին, որուն վրայ գրուած է «Փառք ի բարձունս»ը: Ընդմիջումով խաչի⁽²⁾ երեւակ խումբ մը միայն գրած է ամպերու վրայ՝ կանգուն՝ խրճիթին գլխով: Նոյնպէս իրենք ժապաւէն մը բլուրի վրայ կանգնած են, որոնք ժապաւէնէն աւելի լայն երեքները, որոնք ժապաւէնէն աւելի լայն ցուցատախտակ մը բռնած են:

Հրեշտակներուն երկրորդ երգը արձանադրուած է Աստուածայայտնութեան նշանադրուած մէջ: Լուինոյ հոն կրկնած է կարներուն մէջ: Լուինոյ հոն կրկնած է Ծննդեան նկարին իր հնդեակի խումբը, սակայն հրեշտակիկները ամպերու բակի մը մէջտեղը կանգուն կեցած են⁽⁴⁾, մինչմը մէջտեղը կանգուն կեցած են⁽⁵⁾ աղեղ Կիրլանտայոյ պատկերահանը⁽⁶⁾ անոնցմէ չորսեր շարած է խրճիթի դրան ճակատին (frontone), որոնք գլանաձեւ բաց թուղթ մը բռնած են, ուր կայ գրութիւնը երաժշտական խաղերով:

Երբեմն երգիչներու խումբին կ'ընկ-

րակցին տաւիղ եւ վին (liuto) նուագողներ, ինչպէս Ֆիորենցոյ տի Լորենցոյի նկարին⁽⁷⁾ եւ Փիերոյ տելլա Ֆրանչեսկայի⁽⁸⁾ մսուրին մէջ. եւ կամ անոնց ընկերներու դաս մը, որոնք բոլորաձեւ կը պարեն խրճիթին վրայ, ինչպէս Պոթիլիէլի Յիսուսի Ծննդեան⁽⁹⁾ եւ Անթոնիոյ Ռոսսելլիոյ⁽¹⁰⁾ գծած պատկերներուն մէջ կան:

Ըսուած է արդէն, որ Հրեշտակները կը ներկայացնեն Տիրամօր փոխման ու թագադրութեան յաղթական հանդէսները: Պէտք է աւելցնել հոս, որ անոնցմէ շատերը հոն կը մասնակցին ձայնական եւ գործիական երաժշտութեամբ՝ նոյն օրուան տօնին ծիսական բացատրութեան համաձայն, թէ «Գովութեամբ կ'օրհնաբանեն զԱստուած»:

1400ի պատկերները կը բաժնեն Հրեշտակներու երկու հաւասար խումբեր՝ փառաւորեալ Կուսին երկու կողմերը, որոնք կը նուագեն նոյն ժամանակի յատուկ երաժշտական նուագարաններ, ինչպէս տաւիղ, վին, մեծ ջութակ (viola) եւ թմբիկ (tamburello): Փերուճինոյ զանոնք ամպերուն վրայ կը դնէ կանգուն, դուրս այն պսակէն (mandorla)՝ որ իր մէջ առած է վերափոխեալ Կոյսը⁽¹¹⁾. այդպէս կրկնած է զանոնք Քրիստոսի Համբարձման նկարին մէջն ալ⁽¹¹⁾:

(1) Գոմոյի մայր եկեղեցի:

(2) Վատիկանեան Պատկերասրահ:

(3) Ufficio Ֆիլէնցէի:

(4) Սրբավայր Սարոնոյի:

(5) Սանդա Մարիա տէյլի Իննոչենթի, Ֆիլէնցէ:

(6) Պատկերասրահ Փերուճինոյ:

(7) Ազգային Թանգարան Լոնտոնայի:

(8) Ազգային Թանգարան Լոնտոնայի:

(9) Եկեղեցի Մոնթրալիէթոյի, Նափոլի:

(10) Ufficio Ֆիլէնցէի:

(11) Պոլիոյ Սանսեֆուրբոյ: